

ԿԱՐԾԻՔ

Մերգեյ Լյովայի Ղազինյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին / Մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)

Թեմայի արդիականությունը

Հեղինակին հաջողվել է ատենախոսությանը ներկայացվող գիտական պահանջներին համապատասխան հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը՝ այն պայմանավորելով մի շարք էական և համակարգային բնույթի հանգամանքներով:

Մարդկանց թրաֆիքինգը վերջին տասնամյակներում վերածվել է մարդու իրավունքների ամենակոպիտ և բազմաշերտ խախտումներից մեկի, որը շատ ավելին է, քան պարզապես հանցագործություն: Այն ուղղակի սպառնալիք է հասարակական հարաբերությունների հիմունքներին, սահմանադրական կարգին, այդ թվում՝ մարդու իրավունքներին և մարդու արժանապատվությանը: Ինչպես հայտնի է, եթե իրավագիտությունը չի զարգանում և չի առաջարկում նոր հայեցակարգեր, ապա օրենսդրությունն ու գործնական կիրառումը նույնպես մնում են ստվերում: Թեև քրեաիրավական գործիքակազմի դերը որևէ կերպ չպետք է ստորադասվի, ներկայիս իրողությունները թելադրում են հենց կանխարգելիչ և իրավապաշտպան սահմանադրական կառուցակարգերի կիրառման անհրաժեշտություն:

Թեմայի արդիականությունը և նման համապարփակ հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված են նրանով, որ հայրենական իրավագիտության մեջ մինչ օրս գերիշխում է նեղ քրեաիրավական մոտեցումը, իսկ օրենսդրական և իրավակիրառ դաշտն ունի համակարգային զարգացման անհրաժեշտություն: Ուստի, սահմանադրաիրավական տեսանկյունից թեմայի ուսումնասիրության և գիտական հետազոտության դաշտը բաց է և ոլորտի զարգացման համար պահանջում է համապարփակ գիտագործնական հետազոտություն: Ժամանակակից մարտահրավերները պահանջում են նախաձեռնողական («proactive»), կանխարգելիչ սահմանադրական պաշտպանության մեխանիզմների և ինդիկատորների գործարկում:

Այս ակնհայտ տեսական բացը լրացնելու և միջազգային լավագույն փորձին համապատասխան ոլորտի զարգացմանը նպաստելու նպատակով հեղինակը կատարել է

համապարփակ և խորքային աշխատանք. նա խորապես ուսումնասիրել է արտասահմանյան ակադեմիական դաշտն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը (մասնավորապես՝ հիմնարար նշանակության *Ռանցեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի* գործը)՝ համադրելով դրանք և հստակ ցույց տալով Հայաստանում գոյություն ունեցող բացերը:

Աշխատանքի արդիականությունը նաև անմիջականորեն կապված է «խոցելիության» բազմաշերտ դրսևորումների բացահայտման հետ: Հեղինակը հարցը դիտարկել է թե՛ միջազգային մակարդակում, թե՛ զուտ ներպետական առանձնահատկությունների տեսանկյունից՝ արդիական անդրադարձ կատարելով առցանց տիրույթում առկա վտանգներին, սոցիալական ու գենդերային խնդիրներին, ինչպես նաև փակ հաստատություններում (քրեակատարողական հիմնարկներ, հոգեբուժական կազմակերպություններ) անձանց մեկուսացման հետևանքով առաջացող վտանգներին (էջեր 67-118):

Հատկապես արժեքավոր է աշխատանքի անդրադարձը ՀՀ ներպետական կառուցակարգերին՝ վեր հանելով մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերման և ուղղորդման համակարգում առկա լուրջ օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը (էջեր 119-166): Առանձնահատուկ դրական գնահատականի է արժանի հեղինակի այն մեկնաբանությունը, որ մարդկանց թրաֆիքինգը մարդու արժանապատվության առևտրայնացում ենթադրող երևույթ է (էջ 5): Հիմնախնդրի նման սահմանադրաիրավական ընկալումը փաստում է, որ արժանապատվության առևտրայնացման դեմ պայքարը դուրս է գալիս միայն պատժիչ արդարադատության շրջանակներից՝ վերածվելով սահմանադրականության երաշխավորման հրատապ մարտահրավերի:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը

Անդրադառնալով ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանին՝ հարկ է արձանագրել, որ թեև մարդկանց թրաֆիքինգ երևույթը պարբերաբար արժանացել է հայ մասնագետների ուշադրությանը, սակայն հայրենական իրավաբանական գիտության մեջ այդ ուսումնասիրությունները կրել են առավելապես նեղ քրեագիտական կամ սոցիոլոգիական բնույթ: Հանրային իրավունքի և, մասնավորապես, սահմանադրական իրավունքի, այդ թվում՝ մարդու իրավունքների ու պետության սոցիալական գործառույթի տեսանկյունից այս հիմնախնդրի համալիր և համակարգային ուսումնասիրությունները մինչ օրս գրեթե բացակայել են:

Ներկայացված աշխատանքը հայրենական մակարդակում, ըստ էության, առաջին ամբողջական և ծավալուն դոկտրինալ հետազոտությունն է: Թեմայի բազմաշերտությունը

պահանջել է աղբյուրագիտական լուրջ հենքի ապահովում, ինչը հեղինակի կողմից կատարվել է համակարգային կերպով. նրան հաջողվել է ի մի բերել և խորքային վերլուծության ենթարկել ոչ միայն խնդրի հետ փոխկապակցված ներպետական տեսական գրականությունը, այլև արևմտյան լայնածավալ իրավագիտական աղբյուրներն ու միջազգային իրավակիրառ պրակտիկան:

Ուսումնասիրության ընթացքում ատենախոսի կողմից մշակված և շրջանառության մեջ դրված հայեցակարգային մոտեցումները լրացնում են տեսական այն բացը, որն առկա էր անձի խոցելիության և պետության պարտականությունների սահմանագծում (էջ 7 և 13): Դրանք նպաստում են մարդու իրավունքների երաշխավորման ինստիտուտի առավել ընդգրկուն ընկալմանը՝ դրանով իսկ էապես հարստացնելով հայրենական իրավագիտության դաշտը և ստեղծելով ամուր, գիտականորեն հիմնավորված բազա՝ հանրային իրավունքի այս ենթաճյուղի հետագա ակադեմիական զարգացման, ինչպես նաև օրենսդրական ու իրավակիրառ պրակտիկայի բարեփոխման համար:

Ամփոփելով, հեղինակի կողմից իրականացված հետազոտությունը հիմնված է ինչպես տեսական հարուստ գրականության, այնպես էլ ներպետական և միջազգային իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև դրանց դոկտրինալ մեկնաբանությունների վրա: Հեղինակի կողմից բարձրացված հարցադրումները բնութագրվում են ոչ միայն ակադեմիական հետաքրքրությամբ, այլև ակնհայտ կիրառական արդիականությամբ՝ պահանջելով տեսագործնական լուծումների ձևակերպում, ինչը պատշաճ կերպով ապահովված է աշխատանքում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Մեթոդաբանական առումով հեղինակը ճիշտ և հիմնավորված կերպով սահմանել է հետազոտության առարկան և օբյեկտը: Ատենախոսության նպատակը ձևակերպված է հստակ, իսկ դրանից բխող կոնկրետ խնդիրներն առանձնացված են ճշգրտությամբ և վերլուծված՝ անհրաժեշտ խորությամբ: Խնդիրը դիտարկելով հանրային և սահմանադրական իրավունքի տիրույթում՝ ատենախոսն իր աշխատանքում հաջողությամբ կիրառել է համակարգային և էմպիրիկ վերլուծության մեթոդներ, ինչը թույլ է տվել երևույթը քննել պետության պոզիտիվ պարտականությունների կատարման և ինստիտուցիոնալ պրակտիկայի համալիր համատեքստում:

Աշխատանքի կարևորագույն մեթոդաբանական առավելություններից է փաստացի տվյալների և վերլուծությունների գրազետ համադրումը ազգային ուղղորդման համակարգի գործնական խնդիրների հետ, ինչը վկայում է աղբյուրագիտական հիմնավորվածության մասին (էջեր 119-166): Հեղինակի կողմից իրականացված հետազոտությունը հիմնված է

ինչպես տեսական հարուստ գրականության, այնպես էլ ներպետական և միջազգային իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև դրանց դոկտրինալ մեկնաբանությունների վրա:

Ատենախոսության տեսական հիմքը

Ատենախոսության տեսական հիմքը ձևավորվել է մարդու իրավունքների, սահմանադրական իրավունքի և պետության սոցիալական գործառույթներին առնչվող հայրենական, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ միջազգային հարուստ գիտական աշխատությունների ներգրավմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում օգտագործված աղբյուրների խորությամբ և մեծ ներառականությամբ՝ ընդգրկելով տվյալ ոլորտին վերաբերող առավել հիմնարար դոկտրինալ մեկնաբանությունները:

Մասնավորապես, հեղինակը լայնորեն հիմնվել է միջազգային իրավագիտական գրականության վրա, ինչպես նաև խորապես ուսումնասիրել է Հայաստանի վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, ներառյալ՝ ՄԻԵԴ-ի և Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ կոնվենցիայի մշտադիտարկման մարմնի՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի պրակտիկան: Վերջինը թույլ է տվել նաև իրականացնել տարբեր իրավական համակարգերի փորձի համեմատական վերլուծությունը, որը հնարավորություն է ընձեռել ամբողջական և համակարգված պատկերացում կազմել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ձևավորված տարբեր մոտեցումների մասին: Այս համատեքստում միջազգային փորձի և ներպետական իրավական համակարգի առանձնահատկությունների գրագետ համադրումը թույլ է տվել հեղինակին մշակել առավել արդյունավետ և կիրառելի տեսագործնական լուծումներ:

Աշխատանքի գիտական նորույթը

Ներկայացված հետազոտության արդիականությունն ուղղակիորեն պայմանավորված է դրա նորարարական և համալիր բնույթով, ինչն իր արտացոլումն է գտել աշխատանքի գիտական նորույթում: Այն դրսևորվում է յուրահատուկ եռաստիճան սինթեզով: Հեղինակը համապարփակ կերպով ամփոփում է միջազգային առաջադեմ փորձն ու պետության պոզիտիվ պարտականությունների կոնցեպտը: Հիմնվելով արտասահմանյան գրականության, միջազգային առաջադեմ փորձի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վրա՝ հեղինակն իրավական գիտության մեջ հիմնավորում է արարքին միայն հետին թվով արձագանքող՝ զոհի աջակցության և հանցանք կատարած անձին պատասխանատվության տրամաբանությունից դեպի պրոակտիվ, կանխարգելիչ սահմանադրական պաշտպանության անցման կենսական անհրաժեշտությունը:

Որպես սինթեզի երկրորդ բաղադրիչ՝ ատենախոսը խորքային քննության է ենթարկում անձի խոցելիության բազմաշերտ ու փոխկապակցված հիմքերը: Գիտականորեն նորարարական է այն մոտեցումը, որ շահագործումը դիտարկվում է ոչ թե որպես մեկ մեկուսացված գործոնի հետևանք, այլ սոցիալ-տնտեսական անհավասարության, միգրացիոն զարգացումների, փակ հաստատություններում մեկուսացման և նորագույն մարտահրավերների համակցված ազդեցության արդյունք: Այս համատեքստում հատկապես արժեքավոր է ներպետական սահմանադրական իրավունքում «թվային սահմանադրական պաշտպանության» հայեցակարգի շրջանառումը, որն արձագանքում է առցանց տիրույթում մարդկանց հավաքագրման և շահագործման վտանգներին:

Վերոնշյալ երկու հիմնասյուների սինթեզի արդյունքում ձևավորվում է նորույթի երրորդ և առավել կիրառական բաղադրիչը. հեղինակը ներկայացնում է հստակ, իրավունքահեն և զոհակենտրոն մոտեցմամբ հիմնավորված առաջարկություններ ներպետական ակադեմիական, օրենսդրական և պրակտիկ դաշտի զարգացման համար: Ըստ էության, տեղայնացնելով միջազգային լավագույն փորձը Հայաստանի Հանրապետությունում՝ աշխատանքն առաջարկում է ազգային ուղղորդման համակարգի արմատական արդիականացում, որտեղ տուժողի պաշտպանությունը և նրա իրավունքների վերականգնումը դադարում են պայմանավորված լինել բացառապես քրեական վարույթի հարուցմամբ և դառնում են սահմանադրական կարգի ու մարդու արժանապատվության պաշտպանության անմիջական, ինքնավար բաղադրիչ:

Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում այն խնդրի տեղայնացումը, որ պետության պոզիտիվ պարտականությունը ներառում ոչ միայն ոլորտի հիմնական դերակատարների, օրինակ՝ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերումը, այլև բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրենց մասնագիտական գործառույթների իրականացման ընթացքում, արդյունավետորեն նույնացնելու ռիսկային իրավիճակները, կիրառել համապատասխան գործիքակազմը և ապահովել դեպքերի պատշաճ ուղղորդումը՝ սահմանված միջգերատեսչական և ոլորտային կառուցակարգերին համապատասխան: Հեղինակի կողմից արվում է հիմնավոր պնդում առ այն, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում միայն քրեական արդարադատության մարմինների կողմից իրենց գործառույթների պատշաճ իրականացումը բավարար չէ (էջեր 119-166): Պնդումն իրավացիորեն հիմնավորվում է *Ա. Պ.-ն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ* վճռով արձանագրված խնդիրներով (էջ 82):

Կարևոր է նաև լրացնել, որ ատենախոսությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավիճակը գործնականում դիտարկվում է որպես պետության սոցիալական գործառույթի և սահմանադրական կարգի ամրության յուրատեսակ ցուցիչ:

Հեղինակը հիմնավորում է, որ քանի որ այս երևույթն ուղղակի սպառնալիք է սահմանադրական կարգին, հետևաբար՝ զոհերի անվերապահ պաշտպանությունն ու խնդրին պրոակտիվ արձագանքելը հանդիսանում են հասարակության «սոցիալական իմունիտետի», սահմանադրականության վերականգնման և մարդու արժանապատվության երաշխավորման ուղիղ ցուցիչ (էջ 20):

Հետազոտության արդյունքների փորձարկումը

Հետազոտության արդյունքները փորձարկվել են գիտագործնական և տեսական գիտաժողովներում: Դրանք ներկայացվել են գիտաժողովներում՝ զեկույցների տեսքով, արտացոլվել են մասնագիտական ամսագրերում և գիտական ժողովածուներում հրատարակված հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրատարակած գիտական հոդվածներն էլ արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության կառուցվածքը, բովանդակությունը և արդյունքների վերլուծությունը

Ատենախոսության բովանդակային և կառուցվածքային տրամաբանությունը թույլ է տվել հեղինակին համակողմանիորեն բացահայտել հետազոտվող հիմնախնդիրը՝ հաջորդաբար վերլուծելով միջազգային-իրավական, տեսական և խիստ պրակտիկ-ներպետական հարցադրումները:

Աշխատանքի **առաջին գլխում** հեղինակը հիմնավորում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի տեսանկյունից պետության պոզիտիվ պարտականությունների համակարգային վերաիմաստավորման անհրաժեշտությունը հանրային և սահմանադրական իրավունքի համատեքստում: Կարևորագույն թեզերից է անցումը զուտ ռեակտիվ, պատժիչ մոդելից (որտեղ պետությունն արձագանքում է միայն հանցանքի կատարումից կամ մարդու իրավունքի խախտումից հետո) դեպի պրոակտիվ սահմանադրական կանխարգելիչ պաշտպանության մոդել (էջ 33): Հենվելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վրա (մասնավորապես՝ *Ռանցեն ընդդեմ Կիպրոսի* և *Ռուսաստանի* գործով)՝ ատենախոսն ընդգծում է, որ պետության պարտականությունները վրա են հասնում ոչ միայն կոնկրետ բողոքի դեպքում, այլև այն ժամանակ, երբ իշխանությունները կարող էին կամ պետք է կանխատեսեին մարդկանց թրաֆիքինգի համակարգային ռիսկերը՝ ձեռնակելով դրանց վերացմանն ուղղված քայլեր (էջ 32): Որպես ինստիտուցիոնալ լուծում՝ առաջարկվում է ստեղծել կանխարգելիչ մոնիթորինգի մեխանիզմ՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին օժտելով մարդկանց թրաֆիքինգի հարցերով Ազգային զեկուցողի լրացուցիչ մանդատով (էջեր 52-53):

Աշխատանքի հաջորդ ծավալուն հատվածը՝ **երկրորդ գլուխը**, նվիրված է խոցելիության բազմաշերտ ու փոխկապակցված բնույթի վերլուծությանը: Ատենախոսն առաջ է քաշում փաստարկված թեզ, որ շահագործումը գրեթե երբեք մեկուսացված գործոնի արդյունք չէ, այլ սնվում է անձի տարիքով, աղքատությամբ, գենդերային անհավասարությամբ և լուսանցքային (մարզինալացված) կարգավիճակով (էջեր 67-118): Այս բազմաշերտ խոցելիության համատեքստում հեղինակը հանգամանալից վերլուծության է ենթարկում հատկապես կանանց և երեխաների թիրախավորումը, որոնք շարունակում են խոցելի մնալ սեռական և աշխատանքային շահագործման ուսկերի տեսանկյունից (էջեր 68-85): Հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ շրջանառվում է «թվային սահմանադրական պաշտպանության» հայեցակարգը, որն արձագանքում է վիրտուալ տիրույթում անձանց հավաքագրման և ալգորիթմային մանիպուլյացիաների վտանգներին (էջեր 17, 79-80):

Աշխատանքում համոզիչ կերպով հիմնավորվում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անգործունակության ճանաչման և ոչ հոժարական հոսսափտալացման գործող իրավական ռեժիմները հանգեցնում են խորը ինստիտուցիոնալ մեկուսացման: Այս մեկուսացված միջավայրը, զուգորդվելով համակարգային անփութությամբ, ստեղծում է պայմաններ թաքնված հարկադիր աշխատանքի և անձի անօգնական վիճակի չարաշահման համար (էջեր 85-97): Աշխատանքում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ քրեակատարողական համակարգում առկա հիերարխիկ քրեական ենթամշակույթը և փակ միջավայրը նպաստավոր միջավայր են ձևավորում թաքնված հարկադիր աշխատանքի և անձի խոցելի վիճակի չարաշահման համար (էջեր 97-106): Խնդիրն էլ ավելի է սրվում միգրացիոն գործընթացների լույսի ներքո, որտեղ ատենախոսն ընդգծում է մարդկանց թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի կազմակերպման հստակ տարանջատման կարևորությունը. սա առանցքային նշանակություն ունի փախստականներին պատշաճ միջազգային պաշտպանություն տրամադրելու և արտաքսման արգելքի (չվերադարձելիության) սկզբունքն անշեղորեն պահպանելու համար: Առավել ուշագրավ և գործնական արժեք ներկայացնող է ինստիտուցիոնալ խոցելիության վերլուծությունը փակ և կիսափակ հաստատություններում (էջեր 106-118):

Ներպետական գործնական հարթությունում, ինչն արտացոլված է աշխատանքի **երրորդ գլխում**, ատենախոսը վեր է հանում ներպետական ուղղորդման համակարգում առկա լրջագույն բացերը (էջեր 119-166): Ընդգծվում է, որ մարդկանց թրաֆիքինգի դեպքերի նույնացման գործընթացում ապացուցման բեռը պետք է լինի համաչափորեն աճող և տարբերակված՝ համապատասխան յուրաքանչյուր մարմնի գործառույթներին: Մասնավորապես, առաջնագծի դերակատարներից չպետք է ակնկալվի մարդկանց թրաֆիքինգի ենթադրյալ դեպքի իրավական հիմնավորում կամ ապացուցում. նրանց դերը պետք է սահմանափակվի մարդկանց թրաֆիքինգի հնարավոր նախանշանների

բացահայտմամբ, անձի առաջնային կարիքների գնահատմամբ և դեպքի պատշաճ ուղղորդմամբ իրավասու մարմիններին՝ Ոստիկանությանը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (էջեր 138-139):

Էմպիրիկ տվյալների վերլուծության հիման վրա ցույց է տրվում, որ զոհերի հայտնաբերման ողջ ծանրությունն անհամաչափորեն դրված է իրավապահ մարմինների վրա, մինչդեռ սոցիալական, առողջապահական և կրթական հաստատությունների պոտենցիալը չի օգտագործվում: Ողջունելով Հայաստանի փորձը, աշխատանքում ընդգծվում է, որ զոհի կարգավիճակի պաշտոնական ճանաչումն ու աջակցությանը հասանելիությունը փաստացի չպետք է պայմանավորված լինի քրեական վարույթի առկայությամբ, ենթադրյալ հանցագործության լիարժեք հիմնավորմամբ կամ իրավապահ մարմինների հետ ակտիվ համագործակցությամբ (էջեր 144-145):

Այս համատեքստում նախանույնացումը պետք է դիտարկվի որպես պաշտպանության և աջակցության անհետաձգելի միջոցների հասանելիությունն ապահովող գործիք, այլ ոչ թե որպես մարդկանց թրաֆիքինգի փաստի ամբողջական ապացուցում պահանջող գործընթաց: Նույն կերպ, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից իրականացվող պաշտոնական նույնացումը չպետք է պայմանավորվի քրեական վարույթի շրջանակներում հանցագործության բոլոր տարրերի կամ ենթադրյալ հանցագործի մեղքի ապացուցմամբ, քանի որ նման մոտեցումը նույնացման և աջակցության համակարգի վրա դնում է քրեական արդարադատության համակարգին բնորոշ անհամաչափ ապացուցողական բեռ և կարող է հանգեցնել զոհերի պաշտպանության իրավունքի անհարկի սահմանափակման:

Ատենախոսության **եզրակացություններն ու առաջարկությունները** տրամաբանական շարունակությունն են հետազոտության ընթացքում իրականացված տեսական և գործնական վերլուծության (էջեր 167-174): Դրանք հիմնված են մարդկանց թրաֆիքինգի երևույթի՝ որպես մարդու արժանապատվության, ազատության և իրավական սուբյեկտայնության համակարգային խաթարման ընկալման վրա և նպատակաուղղված են ոլորտում առկա կառուցվածքային խնդիրների հասցեագրմանը:

Հատկանշական է, որ հեղինակը հիմնավորում է ազգային մշտադիտարկման անկախ կառուցակարգի անհրաժեշտությունը, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հնարավոր դերակատարումը՝ որպես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում Ազգային զեկուցող (էջեր 49-66): Արժեքավոր է նաև խոցելիության բազմաշերտ բնույթի վերաբերյալ իրականացված վերլուծությունը, որի արդյունքում հեղինակը մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը կապում է ոչ միայն իրավապահ արձագանքի, այլև սոցիալական քաղաքականության, առողջապահության, կրթության, միգրացիայի և այլ ոլորտներում իրականացվող պետական միջամտությունների հետ: Այս մոտեցումը

հնարավորություն է տալիս մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը դիտարկել որպես միջուկորտային և կանխարգելիչ քաղաքականություն, այլ ոչ միայն որպես հանցագործությունների դեմ պայքարի առանձին ուղղություն:

Դրական է գնահատվում նաև այն հանգամանքը, որ առաջարկությունները չեն սահմանափակվում ընդհանուր բնույթի դիտարկումներով, այլ ուղղված են կոնկրետ ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումների իրականացմանը: Մասնավորապես, ուշադրության են արժանի քրեակատարողական հիմնարկներում, հոգեկան առողջության հաստատություններում և միգրացիոն գործընթացներում ներգրավված անձանց պաշտպանության վերաբերյալ առաջարկվող կառուցակարգերը, որոնք հիմնված են խոցելիության գնահատման, վաղ հայտնաբերման և կանխարգելման տրամաբանության վրա: Միաժամանակ, կարևոր է հեղինակի կողմից ազգային ուղղորդման համակարգի վերաիմաստավորման վերաբերյալ ներկայացված մոտեցումը, որի համաձայն մարդկանց թրաֆիքինգի հնարավոր դեպքերի հայտնաբերման և ուղղորդման գործընթացը պետք է հիմնվի բազմամասնագիտական համագործակցության վրա:

Ընդհանուր առմամբ, ատենախոսությունում ներկայացված եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնում են գիտագործնական հետաքրքրություն և կարող են օգտակար լինել ինչպես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի օրենսդրության և քաղաքականությունների հետագա կատարելագործման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի զարգացման համար:

Հիմնականում համամիտ լինելով պաշտպանության ներկայացված դրույթներում հեղինակի արտահայտած դիրքորոշումների հետ՝ գնահատելով դրանց գիտագործնական նշանակությունը, պատշաճ գիտական ու տեսական մակարդակը և վերլուծությունը, այնուամենայնիվ, հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում առանձին վիճահարույց դրույթների վրա, որոնց կապակցությամբ կցանկանայինք լրացուցիչ պարզաբանումներ ունենալ:

1. Հետաքրքիր և գիտական նորույթի հավակնող մոտեցում է աշխատանքում ներկայացված «սոցիալական իմունիտետի» հայեցակարգի քննարկումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում, որի միջոցով հեղինակը փորձում է բացատրել այդ երևույթի ազդեցությունը ոչ միայն առանձին անձանց իրավունքների, այլև հասարակության՝ սեփական արժեքները, համերաշխությունը և պաշտպանական մեխանիզմները վերարտադրելու կարողության վրա: Աշխատանքում «սոցիալական իմունիտետը» ներկայացվում է որպես հասարակության կոլեկտիվ կարողունակություն՝ դիմակայելու այնպիսի երևույթների, որոնք խաթարում են մարդու արժանապատվության վրա հիմնված սահմանադրական կարգը և թուլացնում են պետության նկատմամբ վստահությունը: Այս տեսանկյունից հայեցակարգը հաջողությամբ ընդգծում է մարդկանց

թրաֆիքինգի կառուցվածքային բնույթը և այն դիտարկում է ոչ միայն որպես քրեաիրավական խնդիր, այլ նաև որպես հասարակական կայունության և սոցիալական համերաշխության մարտահրավեր (էջեր 6 և 16):

Միաժամանակ, կարծում ենք, որ ներկայացված գաղափարական կառուցվածքը կարող էր լրացուցիչ հարստացվել արևմտյան ակադեմիական գրականության մեջ լայնորեն քննարկվող «*contre-pouvoir*» («հակակշռող ուժ» կամ «հակաիշխանություն») հայեցակարգի լույսի ներքո: Վերջինս կենտրոնանում է այն ինստիտուցիոնալ և հասարակական մեխանիզմների վրա, որոնք հնարավորություն են տալիս վերահսկել իշխանությունը, բացահայտել համակարգային խախտումները և կանխել մարդու իրավունքների ոտնահարումները՝ նախքան դրանք կվերածվեն խորքային ճգնաժամերի: Հասկացությունն ընդգրկում է ոչ միայն «ինստիտուցիոնալ» հակակշիռները՝ իշխանությունների տարանջատման դասական տեսության շրջանակում գործող օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, այլև «քաղաքական» հակակշիռները (քաղաքական կուսակցությունների տեսքով), ինչպես նաև սոցիալական հակակշիռները՝ սկսած տնտեսական ու հասարակական ուժերից (օրինակ՝ հասարակական միավորումներից) մինչև ռազմական և հոգևոր ուժեր, որոնց ընդհանուր հատկանիշը քաղաքական իշխանության չարաշահումը հակակշռելու գործառույթն է: Կարծում ենք՝ «*contre-pouvoir*» հասկացությունը մեծ հաշվով հանդիսանում է «սոցիալական իմունիտետի» գաղափարի իրավական դրսևորումը: Եթե «սոցիալական իմունիտետը» նկարագրում է հասարակության կոլեկտիվ կարողունակությունը՝ դիմակայելու իշխանության չարաշահման երևույթներին, ապա «*contre-pouvoir*»-ները հանդիսանում են այն կոնկրետ ինստիտուցիոնալ ու հասարակական մեխանիզմները, որոնց միջոցով այդ կարողունակությունն իրացվում է գործնականում:

Այս առումով «*contre-pouvoir*» հայեցակարգը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում կարող էր առավել անմիջականորեն կապվել Մարդու իրավունքների պաշտպանի, քաղաքացիական հասարակության, անկախ մշտադիտարկման և Ազգային զեկուցողի ինստիտուտի վերաբերյալ աշխատանքում ներկայացված գաղափարների հետ: Հետևաբար, թեև «սոցիալական իմունիտետի» հայեցակարգի վերաբերյալ դիտարկումը հետաքրքիր տեսական նորամուծություն է, դրա համադրումը կամ նույնիսկ վերաիմաստավորումը «*contre-pouvoir*»-ի տեսության շրջանակներում կարող էր ավելի ամուր տեսական հիմք հաղորդել աշխատանքում առաջ քաշված կանխարգելիչ և վերահսկողական կառուցակարգերին:

2. Որոշակի քննարկման տեղիք է տալիս նաև աշխատանքում առաջարկվող պետության պոզիտիվ պարտականությունների եռամիասնության՝ «երաշխավորել – ապահովել – պաշտպանել» («*Guarantee – Secure – Protect*») ձևակերպումը (էջ 12): Թեև հեղինակը տրամաբանական կերպով փորձում է տարբերակել պետության պարտականությունների տարբեր մակարդակները, այնուամենայնիվ, միջազգային իրավունքի և հատկապես ՄԱԿ-ի

մարդու իրավունքների համակարգի շրջանակներում առավել տարածված է «երաշխավորել - պաշտպանել» «Guarantee – Promote – Protect» մոտեցումը: Այս հայեցակարգի շրջանակներում պետության պարտականությունները ներառում են ոչ միայն իրավունքների երաշխավորումն ու դրանց պաշտպանությունը, այլև դրանց ակտիվ խթանումը, մարդու իրավունքների մշակույթի ձևավորումը, իրազեկվածության բարձրացումը և իրավունքների իրացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը:

Այս առումով «ապահովել» («secure») եզրույթը որոշ չափով համընկնում է ինչպես «երաշխավորելու», այնպես էլ «պաշտպանելու» գործառույթների հետ և միշտ չէ, որ հստակ տեսական սահմանազատում է ապահովում դրանց միջև: Փոխարենը «խթանել» («promote») հասկացության կիրառումը հնարավորություն կտար առավել հստակ ընդգծելու պետության կանխարգելիչ, կրթական և սոցիալական քաղաքականության բաղադրիչը, որն առանցքային նշանակություն ունի հատկապես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում: Հաշվի առնելով, որ աշխատանքի առանցքային գաղափարներից մեկը հետգործող պատժիչ արձագանքից դեպի կանխարգելիչ և իրավունքահեն մոդելի անցումն է, «Guarantee – Promote – Protect» կառուցվածքը կարող էր առավել ներդաշնակ կերպով արտացոլել հեղինակի կողմից առաջ քաշված տեսական տրամաբանությունը և այն ավելի սերտորեն կապել միջազգային իրավունքի մեջ ձևավորված մոտեցումների հետ:

3. Դրական է գնահատվում, որ աշխատանքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տվյալների հավաքագրման, թվայնացման և ապացույցահեն քաղաքականությունների մշակման անհրաժեշտությանը: Հեղինակը հիմնավոր կերպով ցույց է տալիս, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես կախված է ոչ միայն առանձին դեպքերին արձագանքելուց, այլև ռիսկերի, միտումների և համակարգային բացերի վերաբերյալ ամբողջական և որակյալ տվյալների առկայությունից: Այս մոտեցումը հատկապես կարևոր է մարդկանց թրաֆիքինգի լատենտային բնույթի պայմաններում, երբ քաղաքականությունների մշակումը պահանջում է հուսալի վիճակագրական և վերլուծական հիմք (էջեր 123 - 124):

Միաժամանակ, կարծում ենք, որ տվյալների հավաքագրման և թվայնացման վերաբերյալ առաջարկությունները կարող էին առավել ամբողջական լինել անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիության իրավունքի երաշխիքների տեսանկյունից: Մասնավորապես, նպատակահարմար կլիներ անդրադառնալ տվյալների հավաքագրման, փոխանակման և մշակման գործընթացներում համաչափության, անհրաժեշտության և բավարար երաշխիքների ապահովման պահանջներին՝ հաշվի առնելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, այդ թվում՝ *Զախարովն ընդդեմ Ռուսաստանի* գործով ձևավորված չափանիշները: Թեև նշված գործը վերաբերում է գաղտնի հսկողության համակարգերին, դատարանը կարևոր սկզբունքներ է ձևակերպել անձնական տվյալների հավաքագրման և պետական մարմինների կողմից տեղեկատվության մշակման նկատմամբ

արդյունավետ վերահսկողության, իրավական կանխատեսելիության և կամայական միջամտությունների բացառման վերաբերյալ:

ՄԻԵԴ Մեծ պալատը սահմանեց վեց նվազագույն երաշխիք, որոնք պետք է ամրագրված լինեն ներպետական օրենսդրությամբ՝ գաղտնի հսկողության չարաշահումները կանխելու համար.

1. գաղտնալսման հիմք հանդիսացող հանցագործությունների բնույթը,
2. ենթակա անձանց կատեգորիաների սահմանումը,
3. գործողության տևողության սահմանափակումը,
4. տվյալների քննման/օգտագործման/պահպանման կարգը,
5. երրորդ կողմերին փոխանցելու նախազգուշական միջոցները և
6. տվյալների ոչնչացման հիմքերը:

Այս չափանիշների կիրառմամբ ՄԻԵԴ-ը գնահատեց համապատասխանությունը՝ մատչելիության, շրջանակի հստակության, տևողության, պահպանման/ոչնչացման կարգի, թույլտվության ընթացակարգի, վերահսկողության և ծանուցման/պաշտպանության միջոցների տեսանկյունից, և արձանագրեց Հոդված 8-ի խախտում՝ համապատասխան երաշխիքների բացակայության պատճառով: Այս թեստի կիրառումը կարող էր նպաստել տվյալների հավաքագրման ազգային մեխանիզմների՝ համաչափության և անհրաժեշտության պահանջներին համապատասխանության առավել կոնկրետ գնահատմանը: Հետևաբար, տվյալների վրա հիմնված քաղաքականությունների զարգացման անհրաժեշտության հետ մեկտեղ, նպատակահարմար կլիներ նաև ընդգծել, որ մարդկանց թրաֆիքինգի գոհերի և խոցելի խմբերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը պետք է իրականացվի մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանությամբ:

4. Դրական է գնահատվում այն հանգամանքը, որ հեղինակը մարդկանց թրաֆիքինգի համատեքստում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միգրացիոն գործընթացներին և հիմնավորում է, որ միգրանտները, ապաստան հայցող անձինք, փախստականները և փաստաթղթեր չունեցող անձինք հաճախ գտնվում են շահագործման բարձր ռիսկի պայմաններում: Աշխատանքում հիմնավոր կերպով ներկայացվում է, որ միգրացիոն կարգավիճակով պայմանավորված կախվածությունը, սոցիալական մեկուսացումը, լեզվական և իրավական խոչընդոտները կարող են նպաստել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման տարբեր ձևերի առաջացմանը (էջեր 106 - 118): Այս մոտեցումը համահունչ է միջազգային կազմակերպությունների և մշտադիտարկման մարմինների կողմից ձևավորված ժամանակակից ընկալումներին:

Միաժամանակ, կարծում ենք, որ այս վերլուծությունը կարող էր լրացուցիչ ամրապնդվել ՄԻԵԴ՝ Միջազգային ընդդեմ Ֆրանսիայի գործի անդրադարձով: Թեև գործն ուղղակիորեն չի

վերաբերում միգրացիոն հոսքերին, այն կարևոր նշանակություն ունի մարդկանց թրաֆիքինգի և շահագործման նկատմամբ միգրանտների խոցելիության գնահատման տեսանկյունից: Դատարանը շեշտել է, որ պետությունները պարտավոր են ոչ միայն քրեականացնել ժամանակակից ստրկության և հարկադիր աշխատանքի դրսևորումները, այլև ապահովել արդյունավետ իրավական և գործնական պաշտպանություն այն անձանց համար, որոնք իրենց միգրացիոն կամ սոցիալական կարգավիճակի պատճառով հայտնվում են առանձնահատուկ կախվածության և շահագործման ռիսկի պայմաններում: Այդ գործին հղումը կարող էր լրացուցիչ ընդգծել աշխատանքի այն հիմնադրույթը, որ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելումը պահանջում է պետության ակտիվ միջամտություն հատկապես այն իրավիճակներում, երբ անձի խոցելիությունը պայմանավորված է նրա միգրացիոն կարգավիճակով կամ փաստացի կախվածությամբ:

5. Աշխատանքում նշվում է, որ «...պետության պոզիտիվ պարտականությունները ներառում են ոչ միայն մարդու իրավունքների խախտումից ձեռնպահ մնալը, այլև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման համար խոցելի սոցիալական միջավայրերի կանխարգելումը» (էջ 7): Այստեղ նկատվում է պետության պոզիտիվ (դրական) և նեգատիվ (բացասական) պարտականությունների որոշակի նույնականացում և տեսական շփոթ: Կարծում ենք՝ աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակն առանձին ենթազույգի կամ հատված տրամադրեր այս երկու հիմնարար հայեցակարգերի դոկտրինալ և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում դրանց քննարկմանը:

Այս խնդիրը հատկապես ակնառու է դառնում ատենախոսության այն հատվածում, որտեղ քննարկվում է ինստիտուցիոնալ խոցելիությունը և թաքնված հարկադիր աշխատանքը փակ հաստատություններում՝ հոգեբուժական կազմակերպություններում և քրեակատարողական հիմնարկներում: Հենց այստեղ է խիստ կարևոր հստակ գծել պետության ներկայացուցիչների կողմից ուղղակիորեն մարդկանց չշահագործելու (նեգատիվ պարտականություն) և վարչարարական անփութության կամ քրեական ենթամշակույթի պայմաններում երրորդ անձանց կողմից իրականացվող շահագործումը կանխելու (պոզիտիվ պարտականություն) միջև առկա նուրբ սահմանագիծը:

6. Դրական է գնահատվում այն հանգամանքը, որ հեղինակը պետության պոզիտիվ պարտականությունների ծավալի և բովանդակության գնահատման համար լայնորեն հենվում է ՄԻԵԴ նախադեպային իրավունքում ձևավորված «Osman»-ի թեստի վրա՝ այն կիրառելով մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և խոցելի խմբերի պաշտպանության համատեքստում (էջեր 32 և 38): Միաժամանակ, թվում է, որ աշխատանքում առավել սահմանափակ ուշադրություն է դարձվել թեստի առանցքային տարրերից մեկին՝ պետության պարտականության ծագումը պայմանավորող «իրական և անմիջական վտանգի» («real and immediate risk») չափանիշին: Մինչդեռ հենց այս տարրն է հնարավորություն տալիս տարբերակել պետության քննական քաղաքական պարտականությունները կոնկրետ

իրավիճակներում առաջացող գործառնական պարտականություններից: Հետևաբար, նպատակահարմար կլիներ առավել մանրամասն անդրադառնալ այն հարցին, թե մարդկանց թրաֆիքինգի, շահագործման կամ ինստիտուցիոնալ խոցելիության պայմաններում ինչ հանգամանքներում կարելի է համարել, որ պետության համար արդեն առկա է եղել իրական և անմիջական վտանգի մասին իմացություն կամ այդ մասին տեղեկացված լինելու ողջամիտ հնարավորություն, ինչը կհանգեցներ «Osman»-ի թեստի առավել ամբողջական և համակարգային կիրառության:

7. Աշխատանքում հետաքրքիր և հիմնավորված կերպով կիրառվում է համաչափության սկզբունքի վերլուծությունը (էջեր 23 – 24,), սակայն որոշ դեպքերում քննարկումը չի ընդգրկում համաչափության թեստի բոլոր բաղադրիչները: Մասնավորապես, բավարար ուշադրություն չի դարձվում ավելի մեղմ կամ իրավունքների համար նվազ սահմանափակող միջոցի («less restrictive measure») առկայության գնահատմանը, ինչպես նաև հանրային հրատապ սոցիալական պահանջի («pressing social need») չափանիշին, որը հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում ՄԻԵԴ նախադեպային իրավունքում և սերտորեն կապված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության շրջանակում ձևավորված համաչափության չափորոշիչների հետ:


Հաշվի առնելով, որ աշխատանքի առանցքներից մեկը սահմանադրաիրավական վերլուծությունն է, անհրաժեշտ էր առավել մանրամասն անդրադառնալ այն հարցին, թե մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով կիրառվող սահմանափակումները կամ միջամտությունները որքանով են հիմնավորված հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ և արդյոք նույն նպատակին հնարավոր է հասնել անձի իրավունքների համար առավել մեղմ միջամտություն ենթադրող միջոցներով: Նման վերլուծությունը թույլ կտար առավել ամբողջական ներկայացնել համաչափության սկզբունքի կիրառությունը և այն առավել սերտորեն կապել սահմանադրական վերահսկողության ձևավորված չափանիշների հետ:

Վերը նշված դիտողություններն ու նկատառումներն, այնուամենայնիվ, կրում են մեթոդաբանական և բանավիճային բնույթ և ամենևին չեն նսեմացնում ատենախոսական հետազոտության գիտական արժանիքները, բարձր որակը և կատարված աշխատանքի նկատմամբ ձևավորված դրական գնահատականը:

Ամփոփելով վերոգրյալը արձանագրում ենք, որ Սերգեյ Լյովայի Ղազինյանի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը և զոհերի իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն և գիտագործնական մեծ նշանակություն ունեցող աշխատանք է, որը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գործող «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» թեկնածուական ատենախոսություններին

ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ա. Շ. Հարությունյան



22.06.2026թ.

Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ա. Շ. Հարությունյանի
ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

գրասենյակի ղեկավար - ղեկանի տեղակալ



Ա. Պետրոսյան